# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 52 | զրահաբաճկոն | - | ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ | Զրահաբաճկոն Ա տեսակի, սև: Զրահիաբաճկոնը առանց բալիստիկ վահանների է, բաղկացուցիչ հիմնական մասերն են՝ զրահակիրը և զրահակրին ամրացվող տակտիկական գոտին: Զրահակիրը կազմված է դիմային, թիկունքային և երկու կողային հատվածներից: ՈէՆի 4 կետով արագ անջատման, արձակման համակարգեր և արտաքինից պատյանների ամրացման (մոլլե) համակարգեր: Դիմյին և թիկունքային մասերը ուսերի վրա միմյանց ամրանում են չափսի փոփոխման հնարավորություն ունեցող կախաններով , որոնք դիմացից ունեն արագ անջատման համակարգեր: Մարտաբաճկոնը բոլոր հատվածներում ՝ դիմային, թիկունքային, կողային, ունի արտակարված մոլլե համակարգի ամրագոտիներ: Արտաքին մակերեսների վրա պատրաստված են 5-6 շարք 25մմ լայնությամբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ՄՈԼԼԵ ժապավեններ: Ուսագոտիները պատրաստված են 40մմ լայնությամբ ժապավենից՝ երկարության կարգավորումը կպչուն ժապավենների և արգելակիչ ճարմանդի միջոցով, ամրանում են առջևի մեկուսամասին արագ արձակման ճարմանդներով: Ուսաբարձիկները սպունգային ներդիրով, 12ից 14սմ հաստությամբ, 8սմ լայնությամբ, 15սմ երկարությամբ փոքր չափերի համար կամ 9սմ լայնությամբ, 25սմ երկարությամբ մեծ չափերի համար՝ թիկունքային մեկուսամասին և ուսագոտիներին ամրանալու հնարավորությամբ: Դիմային և թիկունքային հատվածները բազմաշերտ են, ունեն սպունգային բարձիկներ, ցանցային օդափոխման շերտեր, ինքնակպչուն ժապավեններով հատվածներ, ներսի մասում ունեն զրահե վահանների տեղադրման համար նախատեսված գրպաններ, որոնք կոճկվում են (ամրանում են) նվազագույնը 4 սմ լայնքով, բարձր որակի ինքնակպչուններով: Կարերը ամուր են, ամրակարերը զիգզագաձև: Պատրաստված է 1000 դեն նեյլոնե և/կամ 100% պոլիէսթեր նյութերից, նեյլոնե ժապավենից և պարաններից, հիմնական կարի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1400 N , ներքին կարերի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1000 N : ՈՒնի գոտկատեղերի արագ ամրացման-արձակման պոլիմերային ճարմանդներ՝ նեյլոնե կախաններով, որոնք ամուր են, թույլ ճկվող, դժվար կոտրվող: Մարտաբաճկոնի քաշը՝ առանց ամրացվող պատյանների 3,2-3,6 կգ, դիմային և հետին վահանիկների լայնքը՝ 32-34սմ, բարձրությունը՝ 38-42 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | սմ: Դիմային և կողային հատվածները ունեն 7-9 հատ AK-74 ինքնաձիգի պահեստատուփերի համար նախատեսված գրպանիկներ, որոնցից 3-4 հատը` դիմային մասում, ունեն պահեստատուփերի ամուր ֆիքսման համակարգեր: Մարտաբաճկոնին կարված են դիմային և թիկունքային 2 հատ ինքնակպչուն ժապավեններ, որոնց ամրացված է ասեղնագործված կամ պոլուռետանային 6սմ* 10սմ չափսի տարբերանշաններ (գույները, ձևը, չափսերը և գրվածքները Մատակարարին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո` անմիջապես): Տակտիկական գոտին երկշերտ է, կազմված է ներքին` ինքնակպչունով վրակարված ազատ ծայրերով գոտիից և արտաքին գոտիից , որի ծայրերին մետաղական կամ ամուր պլաստմասայե ճարմանդներ են, գոտու չափսի կարգավորման հնարավորությամբ: Արտաքին գոտու երեսին ամրակարված է երկշերտ մոլլէ (տակտիկական ամրացման) համակարգ: Ջրահաբաճկոնի արտաքին տեսքը, ձևը, ձևվածքը ըստ Պատվիրատուի կողմից ներկայացվող նմուշի: Փաթեթավորումը և պիտակավորումը գործարանային, ստվարաթղթե արկղերով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО «Армтекстиль» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 52 | | | | |